




ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ  
ԳԻՏԱԿԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ  
ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)




ԵՐԵՎԱՆԻ  
ԳԵՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԴԱՆ



«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ  
ՊՂՆՁԱՄՈՒԼԻԲԳԵՆԱՅԻՆ  
ԿՈՄԻՏԵԱՑ» ՓԲԸ



# ԳԻՏԱԿԱԿԱՆ ԱՐՑԱԽ



SCIENTIFIC  
ARTSAKH

НАУЧНЫЙ  
АРЦАХ

Հիմնադիր – Founder – Учредитель:  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)  
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)  
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)  
[www.y-su.am](http://www.y-su.am)

Հրատարակիչ – Publisher - Издатель:  
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻՎՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)  
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)  
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)  
[www.aegmm.org](http://www.aegmm.org)

**ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ**  
**SCIENTIFIC ARTSAKH**  
**НАУЧНЫЙ АРЦАХ**

**№ 1(2), 2019**

*«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:*

*The «Scientific Artsakh» journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).*

*Журнал «Научный Арцах» включен в список научных периодических изданий, приемлемых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).*

ԱԵԳՄՄ – UYSSA – ОМУСА  
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН  
2019

Հրատարակության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Рекомендовано к публикации решением ученого совета Ереванского государственного университета

Recommended for Publication by the Yerevan State University Academic Council Decision

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**Լախագահ՝ Արամ ՄԻՄՈՆՅԱՆ** ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ  
**Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեհմինա ՍԱՐՈՒԹՅԱՆ**, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

**Անդամներ՝**

- Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
- Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
- Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
- Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
- Խաչիկ ԳԱԼՍՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ
- Զուլիետա ԳՅՈՒԼԱՍԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
- Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Կոստրոմա, ՌԴ)
- Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
- Արման ԵՂԻԱՉԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
- Մարել ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Օլշտին, Լեհաստան)
- Վալենտինա ԼԱՊԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Մոսկվա, ՌԴ)
- Օտտո ԼՈՒԻՏԵՐՅԱՆԴՏ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Չամբուրգ, Գերմանիա)
- Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
- Սուշել ՀՈՎՍԵՓՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
- Գագիկ ԴԱՉԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
- Վշոտ ՍԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
- Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
- Կարին ԼԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
- Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
- Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
- Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Դոնի Ռոստով, ՌԴ)
- Գարիկ ԲԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
- Տիգրան ԶՈՉԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 1(2), 2019, Երևան, ԱԵԳՄՄ հրատ., 2019, 480 էջ:  
Scientific Artsakh, № 1(2), 2019, Yerevan, UYSSA publ., 2019, 480 pages.  
Научный Арцах, № 1(2), 2019, Ереван, Изд. ОМУСА, 2019, 480 страниц.

«Գիտական Արցախ» պարբերականի 2019թ. 1-ին համարում տեղ են գտել հասարակական գիտությունների արդի հիմնախնդիրների վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունը, Արցախի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Իրանի Իսլամական Հանրապետությունը, Լեհաստանը, Շվեյցարիան և Ռուսաստանի Դաշնությունը ներկայացնող 50 անվանի ու երիտասարդ գիտնականների աշխատանքները:

In the first issue of the «Scientific Artsakh» journal in 2019 the works on topical issues of social sciences by 50 well-known and young scientists representing Republic of Armenia, Republic of Artsakh, Republic of Belarus, the Islamic Republic of Iran, Poland, Switzerland and the Russian Federation are published.

В первом номере за 2019-ый год журнала «Научный Арцах» опубликованы работы по актуальным проблемам общественных наук, авторами которых являются 50 известные и молодые ученые, представляющие Республику Армения, Республику Арцах, Республику Беларусь, Исламскую Республику Иран, Польшу, Швейцарию и Российскую Федерацию.

**EDITORIAL COUNCIL**

**Chairman:** Aram SIMONYAN, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor

**Editor-in-Chief:** Avetik HARUTYUNYAN, Ph.D in Law, Associate Professor

**Deputy Editor-in-Chief:** Tehmina MARUTYAN, Ph.D in Philology, Associate Professor

**Members:**

Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor  
 Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor  
 David BABAYAN, Doctor of History, Associate Professor  
 Vahram BALAYAN, Doctor of History, Professor  
 Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor  
 Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Associate Professor  
 Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor  
 Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (Kostroma, Russia)  
 Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor  
 Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor  
 Moushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor  
 Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor  
 Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor  
 Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (Moscow, Russia)  
 Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (Hamburg, Germany)  
 Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor  
 Edik MINASYAN, Doctor of History, Professor  
 Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor  
 Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor  
 Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor  
 Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (Rostov-on-Don, Russia)  
 Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Associate Professor  
 Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (Olsztyn, Poland)

**РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ**

**Председатель:** Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

**Главный редактор:** Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

**Заместитель главного редактора:** Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

**Члены:**

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор  
 Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор  
 Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор  
 Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент  
 Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор  
 Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)  
 Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, доцент  
 Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)  
 Джульетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор  
 Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор  
 Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, доцент  
 Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)  
 Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор  
 Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор  
 Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор  
 Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)  
 Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)  
 Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор  
 Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор  
 Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент  
 Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор  
 Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор  
 Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

**Աշոտ Մարկոսյան, Մարինե Ղահրամանյան.** Բիզնես գործընթացների կառավարման առանձնահատկությունները Հայաստանում..... 136  
**Ashot Markosyan, Marine Ghahramanyan.** The Specifics and Peculiarities of Business Process Management in Armenia

**Ашот Маркосян, Марине Каграманян.** Специфика и особенности управления бизнес-процессами в Армении

**Աշոտ Մարկոսյան, Էլյանորա Մաթևոսյան.** Պետական պարտքի «ճգնաժամը» և Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքի արդյունավետությունը..... 148

**Ashot Markosyan, Eleonora Matevosyan.** «Crisis» of the State Debt and Efficiency of the External State Debt of the Republic of Armenia

**Ашот Маркосян, Элеонора Матевосян.** «Кризис» государственного долга и эффективность внешнего государственного долга Республики Армения

**Միքայել Սողոմոնյան.** Բնական մենաշնորհների պետական կարգավորման մեթոդների և կառուցակարգերի կատարելագործման ուղղությունները..... 170

**Mikayel Soghomonyan.** The Ways to Improve the Methods and Mechanisms of State Regulation of Natural Monopolies

**Микаэл Согомонян.** Пути совершенствования методов и механизмов государственного регулирования естественных монополий

**Արամ Վերդյան.** Հնդկացորենի արտադրության և վերամշակման խնդիրները Արցախի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման համատեքստում..... 179

**Aram Verdyan.** The Problem of Production and Processing of Buckwheat in the Context of Artsakh Republic's Food Security Providing

**Арам Вердян.** Проблемы производства и переработки гречихи в контексте обеспечения пищевой безопасности Республики Арцах

**Լևոն Զոչարյան.** ՀՀ-ին բնորոշ գյուղատնտեսական ռիսկերը. ապահովագրությունը որպես այդ ռիսկերի զսպման մեխանիզմ..... 194

**Levon Kocharyan.** Specific Agricultural Risks in Armenia. Insurance, as a Risk Mitigation Mechanism

**Левон Кочарян.** Характерные для Республики Армения сельскохозяйственные риски: страхование как механизм снижения этих рисков

***ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, JURISPRUDENCE,  
 ЮРИСПРУДЕНЦИЯ***

**Ալֆրեդ դե Չայաս.** Ինքնորոշում. Արցախի անկախության իրավունքը հաստատող ժամանակակից միջազգային կարգի հիմնարար սկզբունքը..... 199

**Alfred De Zayas.** Self-Determination: A Foundational Principle of Today’s International Order That Confirms Artsakh’s Right to Independence

**Альфред де Зайас.** Самоопределение: основополагающий принцип современного международного порядка, подтверждающий право Арцаха на независимость

**ՀՀ-ԻՆ ԲՆՈՐՈՇ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ.  
ԱՂԱՅՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՅՂ ՌԻՍԿԵՐԻ  
ՉՄՊՄԱՆ ՄԵԽԱՆԻՉՄ\***

ՀՏԴ 368.5(479.25)

**ԼԵՎՈՆ ԶՈՉԱՐՅԱՆ**

*Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի  
բանկային գործի և ապահովագրության ամբիոնի ասպիրանտ,  
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[levonkocharyan@outlook.com](mailto:levonkocharyan@outlook.com)*

**Գյուղատնտեսությունը համարվում է ՀՀ տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը: 2018թ.-ի ՀՀ ՀՆԱ-ն կազմել է 6,002,747,800,000 ՀՀ դրամ, որից 926,360,500,000 ՀՀ դրամը, կամ ՀՆԱ 15.4%-ը կազմել է գյուղատնտեսությունը<sup>286</sup>: Այդ ոլորտը ՀՀ ամենախոցելի, ամենափխրուն և ֆորս մաժորային իրավիճակներից ամենաշատ ենթարկվող ոլորտն է: Գրեթե բոլոր տեսանկյուններից՝ ներառյալ պարենային անվտանգության, պաշտպանության, սոցիալական, սպառողական և այլն, գյուղատնտեսությունը կարելի է համարել Հայաստանի համար ամենակարևոր ոլորտը: Հետևաբար, անհրաժեշտ է ապահովել այդ ոլորտի կայուն պարզացումը և պաշտպանել ռիսկերից: Գրեթե ամեն տարի ՀՀ գյուղատնտեսությունը ենթարկվում է այնպիսի տարերային աղետների, ինչպիսիք են՝ կարկուտը, երաշտն ու ցրտահարությունը, տարբեր տեսակի վարակներն ու հիվանդությունները, իսկ վերջին տարիներին ավելացել են նաև հրդեհի դեպքերը:**

**Սույն հոդվածում կփորձենք բացահայտել Հայաստանին բնորոշ գյուղատնտեսական ռիսկերը, դրանց զսպման ու կանխարգելման մեխանիզմները միջազգային պրակտիկայում, կթնարկենք, թե բացահայտված ռիսկերից որո՞նք են հնարավոր ապահովագրել:**

**Բանալի բառեր՝ ապահովագրություն, գյուղատնտեսություն, ռիսկեր, մշակաբույս, աղետ, կարկուտ, երաշտ, ցրտահարություն:**

Համաձայն արտադրողների, փորձագետների ու գյուղատնտեսների ներկայացրած նախնական տվյալների՝ Հայաստանում հիմնական ընկալվող ռիսկերն են կարկուտը, ցրտահարությունը, սառը հոսանքներն ու երաշտը<sup>287</sup>:

Համաձայն ՄԱԿ Չարգացման Ծրագրի կողմից կատարված հետազոտության ու ուսումնասիրության՝ ցրտահարության ժամանակ վեգետացիոն շրջանի ընթացքում օդի ջերմաստիճանը երկրի մակերևույթին մոտ կամ երկրի մակերևույթին իջնում է մինչև սառեցման վիճակի (0°C) կամ ավելի ցածր: Եղամային ցրտահարության ժամանակ սառցաբյուրեղներ են հայտնվում օբյեկտների վրա՝ օդից ջրային գոլորշու

\* Հոդվածը ներկայացվել է 16.04.2019թ., գրախոսվել՝ 26.04.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

<sup>286</sup> [https://www.armstat.am/file/article/sv\\_12\\_18a\\_122.pdf](https://www.armstat.am/file/article/sv_12_18a_122.pdf):

<sup>287</sup> Կարիքների գնահատում կլիմայական ռիսկերը մեղմելու համատեքստում Հայաստանում գյուղատնտեսական ապահովագրության ներդրման համար, Պատվիրատու՝ ՄԱՉԾ հայաստանյան գրասենյակ, «Տեղական զարգացման բարելավված պլանավորման միջոցով կլիմայի փոփոխության ռիսկերի մեղմումը գյուղական համայնքներում» ՄԱՉԾ-ԵԿԿԲ Ծրագիր, հեղինակ՝ Կլեմանս Տատեն-ժալերան:

ուղղակի սուբյեկտի միջոցով: «Սև ցրտահարությունը», որը տեղի է ունենում ցածր խոնավության ու ցածր ջերմաստիճանի պայմաններում, սակայն առանց սառույցի ակնհայտ առաջացման, հանգեցնում է որոշ օրգանիզմների ու հյուսվածքների տեսանելի մեռուկացման (սեկրոզի): Գարնանը ցրտահարությունը վնասում է նուրբ հյուսվածքները: Բազմամյա բույսերի համար ձմեռային ցրտահարությունը վնասում է բոլոր օրգանները, այդ թվում՝ արմատները – դա «սպանող ցրտահարությունն» է:

Ցրտահարությունը կամ սառչելը հանգեցնում են մշակաբույսի վնասման, որովհետև ջերմաստիճանը նվազում է բույսի դիմացկունության աստիճանից ցածր: Կյո երևույթը հիմնականում տեղի է ունենում, երբ ջերմաստիճանը իջնում է մինչև 0 °C-ին մոտ կամ գիշերային սառցակալման դեպքում (ռադիացիոն ցրտահարություն) կամ ավելի սառն օդային զանգվածների տեղաշարժման ու ազդեցության դեպքում: Կլիմայական այդպիսի «աղետների» ի հայտ գալը այնպիսի ժամանակահատվածում, երբ բույսերը դիմացկուն չեն (վաղ կամ ուշ ձմռանը և վաղ գարնանը, վաղ աշնանը), և բույսերի հյուսվածքները կարող են վնասվել ցրտահարությունից, պատճառում են առանցիկ վնասներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ ոչ միայն տվյալ տարվա բերքի, այլև հետագա 2-3 տարիներին սպասվելիք բերքի վրա: Բույսերի բջիջները սառչում են և անդամալիորեն վնասվում:

Ցրտահարության դեմ հնարավոր է պայքարել ակտիվ ու պասիվ եղանակով<sup>288</sup>: Ըստ ՄԱԾՏ հետազոտության՝ մինչդեռ ակտիվ միջոցները (տաքացուցիչների կամ ցնցուղների կիրառում) պահանջում են էներգիայի սպառում և կարող են ծախսատար լինել, պասիվ մեթոդները կարող են կիրառության ու հարմարեցման առումով լինել ավելի ծախսարդյունավետ և դիտարկվել որպես ապահովագրության հետ համադրաբար կիրառելի միջոցներ: Պասիվ միջոցները ներառում են տեսակների ընտրությունը ֆենոլոգիական դիտարկումների ժամանակի համաձայնեցման համար, բերքի տարածքի ընտրությունը, լանդշաֆտի և միկրոկլիմայի փոփոխությունը, մուգման կարգավիճակի վերահսկումը և հողերի կառավարման զարգացման խթանումը ռիսկի մեղմման նպատակով: Կյոպիսով ցրտահարության որոշ երևույթներ կարող են կանխատեսվել և ակնկալելի լինել:

Յաշվի առնելով ցրտահարության հնարավոր երևույթի և ազդեցության բազմազանությունը՝ ապահովագրության նպատակով ցրտահարության սահմանումը կարող է խնդրահարույց լինել: Կարիքները գնահատելու նպատակով ապահովագրության ծածկույթի, հնարավոր ծախսերի ու պրոդուկտի տեսակի առումով անհրաժեշտ են ցրտահարման ռիսկերի վերաբերյալ հավելյալ տվյալներ ու քարտեզագրում՝ ըստ մարզերի ու բերքի տեսակի:

Որպես կանոն՝ ցրտահարության ապահովագրությունը ամենադժվարն ու ամենաթանկն է՝ ի տարբերություն կարկուտի ու վնասների այլ տեսակների<sup>289</sup>: Ցրտահարությունը հիմնականում ընդգրկում է ավելի մեծ տարածքներ, պատճառում է ավելի մասշտաբային վնասներ, իսկ գյուղացին ու ապահովագրական ընկերությունները հայտնվում են ավելի խոցելի վիճակում: Ցրտահարության ռիսկերի ապահովագրության ամենապրակտիկ ռիսկը «Գարնանային ցրտահարություն» ռիսկն է, քանի որ ձմռան ցրտահարությունը դուրս է ապահովագրության սկզբունքներից՝ կանխատեսելի լինելու պատճառով: Ցրտահարությունը ավելի անկանխատեսելի է և ավելի շատ վնասներ է հասցնում գարնանը, հետևաբար ակտուալ է հենց գարնանային ցրտահարության ռիսկը:

Կարկուտը ի հայտ է գալիս ամպրոպաբեր ամպերի առկայության պայմաններում՝ ամպրոպների ու մթնոլորտային անկայունության ժամանակ: Երբ

<sup>288</sup> Risks in Agriculture, Farmer's perspective, Authors: **Parikh**, Alka, 2017.

<sup>289</sup> Agricultural Risk Transfer: From Insurance to Reinsurance to Capital Markets, Roman Marco Hohl, ISBN: 978-1-119-34563-3.

օղը խոնավ է ու անկայուն, օդի՝ դեպի վեր շարժման առկայությամբ ջրի կաթիլները, բախվելով տաք շերտերին, սառչում են և կազմավորում կարկտահատիկներ: Կարկտի հատիկները չափով կարող են լինել մի քանի մմ կամ մի քանի սմ 5-ից մինչև 50 մմ: Որքան մրրիկի ժամանակ ավելի ուժեղ է օդի շարժը դեպի վեր այնքան ավելի խոշոր են կարկտահատիկները: Երբ դրանք թափվում են ամպերից, կարող են հասնել վայրկյանում ինը մետր արագությունից (մ/վ) (մեկ սմ կարկտահատիկ) մինչև 48 մ/վ արագության (ութ սմ կարկտահատիկներ):

Կարկուտի ազդեցությունը բերքի վրա կարող է ավերիչ լինել: Բերքը կարող է ամբողջովին (100%-ով) վնասվել: Վնասի աստիճանը կախված է ուժգնությունից և այն բանից, թե արտադրության ցիկլի որ փուլում է կարկուտը տեղում:

- վաղ սեզոնին որոշ մրգեր կարող են թափվել կամ վնասվել՝ այդուհանդերձ, եթե որոշ մրգեր վնասվում են, որոշ բողբոջներ հնարավոր է դեռևս կարողանան տալ պտուղներ (փոխհատուցող աճ): Այդ դեպքում բերքը կարող է լինել սպասվածից քիչ:

- վաղ ամռանը, երբ միզն ու բանջարեղենը դեռևս հավաքված չեն, ամբողջ բերքը կարող է կորսվել:

- ուշ ամառային փոթորիկների ժամանակ շատ խոցելի են նաև խաղողի այգիները:

Եթե մրգերն ու բանջարեղենը վնասվում են կարկուտից, դրանց որակը և, հետևաբար, գինը հնարավոր է ավելի ցածր լինի՝ նվազեցնելով արտադրողի եկամուտը: Ավելին, կարկուտի հարվածած ծառերը կարող են ենթակա լինել վնասատուների ու հիվանդությունների, քանի որ կարկուտի ծեծած կետերը կարող են հիվանդությունների ներթափանցման ուղիներ դառնալ: Կարկուտի ազդեցությունը կարող է գնահատվել տեսողական ճանապարհով, եթե ազդեցության գործոնները փաստաթղթերով արձանագրված են մասնագետ գյուղատնտեսների կողմից:

Հայաստանում կարկտահողմեր լինում են շոգ սեզոնին՝ մայիսից օգոստոս ժամանակահատվածում: Կարկուտ առավել հաճախ սպասվում է մայիս-հունիսին, իսկ խոշոր հատիկներով՝ հուլիս-օգոստոսին: Կարկուտներն առավել հաճախակի են Շիրակում, Լոռիում, Տավուշում, Արագածոտնի բարձրադիր գոտիներում, Գեղարքունիքում ու Կոտայքի լեռնային գոտիներում, միջինը՝ տարեկան 4-5 դեպք: Հովտային գոտիներում կարկուտի հաճախականությունն ավելի ցածր է՝ տարեկան 1-2 անգամ:

Կարկուտի կանխարգելման հարցում ամենակիրառելի ձևերը ամպերի ցրման ու հակակարկտային կայանների կիրառումն է, սակայն դրանց արդյունավետության վերաբերյալ ապացուցված տվյալներ չկան<sup>290</sup>: Արտադրողները կարող են կիրառել հակակարկտային ցանցեր, եթե պաշտպանության միջոցառումներում ներդրում կատարելը հանգեցնում է ավելի մեծ ծախսարդյունավետության, քան ժամանակակից պտղատու և խաղողի այգիների դեպքում ռիսկը փոխանցելը: Որակյալ ցանցերը շատ հաճախ կարկուտի ռիսկը նվազեցնում են մինչև 100%<sup>291</sup>:

Կարկուտի ռիսկը ապահովագրության տեսանկյունից ամենապրակտիկն է ու կիրառելին<sup>292</sup>: Կարկուտի հետևանքները ավելի հեշտ են երևում, կարկուտի վնասները ավելի հեշտ են գնահատվում: Կարկուտը դիսկրետ է, տեսանելի ու շոշափելի՝ ի տարբերություն ցրտահարության ու երաշտի: Հետևաբար, այն ապահովագրողների կողմից ապահովագրության ենթակա «ամենացանկալի» ռիսկն է՝ չնայած պատճառած ահռելի վնասների: Կարկուտի ապահովագրության սակագները ավելի ցածր են, իսկ վնասների կարգավորման ծախսերը՝ մատչելի:

<sup>290</sup> MANAGING RISK in farming by David Kahan, FOOD AND AGRICULTURE ORGANIZATION OF THE UNITED NATIONS, Rome 2008

<sup>291</sup> Hail cover for pilot in Armenia, October 29th 2018, Michael J. McCord



Գյուղատնտեսության դեպքում երաշտը հետևանք է օդերևութաբանական (կամ հիդրոլոգիական) տարբեր իրավիճակների՝ տեղումների սակավություն, փաստացի և հնարավոր գոլորշիացման ու տրանսպիրացիայի միջև տարբերություններ, հողի խոնավության դեֆիցիտ, ստորերկրյա ջրերի կամ ջրամբարների մակարդակի նվազում, և դրանց ազդեցություններն անմիջապես չեն տեղի ունենում: ՅՕԿ զեկույցում փորձագետն ընդգծում է, որ «*Երաշտը պետք է դիտարկվի կոնկրետ տարածքում տեղումների և գոլորշիացման ու տրանսպիրացիայի հավասարակշռության միջին երկարաժամկետ պայմանների հետ համեմատությամբ: Դա կապված է նաև ժամանակի հետ (ի հայտ գալու գլխավոր սեզոնը, անձրևների սեզոնի մեկնարկի ուշանալը, անձրևների հայտնվելը՝ կապված բերքի աճի հիմնական փուլերի հետ) և անձրևների արդյունավետությունը (այն է՝ անձրևների ինտենսիվությունը, անձրևելու երևույթների քանակը)*»:

ՀՀ-ում սովորաբար երաշտ է կանխատեսվում հուլիս-սեպտեմբեր ամիսներին, բայց լինում է գարնանն ու աշնանը: Մեծամասամբ երևույթը նկատվում է Արարատյան դաշտավայրում և, երբեմն, Արարատի նախալեռնային հատվածում, Տավուշի մարզում ու Սյունիքի հովիտներում:

ՀՀ-ն վերջին շրջանում ականատես է եղել երաշտի երկու մասշտաբային դեպքի՝ 2000 և 2006 թվականներին՝ երաշտ է գրանցվել Հայաստանի ողջ տարածքում՝ Նույնիսկ ծովի մակերևույթից 3,000 մ բարձրությամբ տարածքներում: Երաշտի հաճախականությունը մոտավոր հաշվարկներով կարող է լինել 2-4 տարին մեկ անգամ. կոնկրետ տվյալների համար անհրաժեշտ են ավելի շատ մանրամասներ:

Երաշտի սահմանումը ապահովագրության նպատակով կարող է խնդրահարույց լինել, և Հայաստանում այդ ռիսկի վերաբերյալ տեղեկություններն ու հետազոտություններն ավելի սակավ են հանդիպում, քան այլ ռիսկերի դեպքում:

Երաշտի ապահովագրությունը ավելի բարդ ու համապարփակ միջոցառում է, քանի որ դժվար է հաստատել պատճառահետևանքային կապը վնասի ու երաշտի միջև:

Որպես ամփոփում՝ նշենք, որ գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության հարցում կարևոր են հետևյալ կետերը.

1. Հստակ բացահայտել վնասի առաջացման պատճառը՝ կարկուտ է, երաշտ, թե՛ հիվանդություն, վարակ: Շատ հաճախ ցրտահարության ու վարակի ֆիզիկական ախտանիշերը նման են, և միայն պրոֆեսիոնալ գյուղատնտեսները կարող են դրանք տարանջատել:

2. Կախված հատուցման մեխանիզմից՝ որոշել վնասի հստակ չափը: Այստեղ կարևոր է իմանալ, թե որն ենք համարում վնաս՝ միևնույն բերքի վնասվելը ծախսած գումարները, թե՛ ապագայում վաճառվելիք բերքի շուկայական արժեքը կամ հետագայում նմանատիպ բերք ստանալու համար անհրաժեշտ ծախսերը:

Ուսումնասիրելով ՀՀ կլիմային հատուկ գյուղատնտեսական ռիսկերը՝ կարելի է եզրակացնել, որ գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրությունը մեր երկրում ներդնելը բարդ ու երկարաժամկետ պրոցես է՝ հաշվի առնելով ռիսկերի հաճախականությունը, կլիմայական բազմազանությունը, վնասների մեծ չափերը, ապահովագրական ընկերությունների նկատմամբ մարդկանց անվստահությունը, վիճակագրական տվյալների պակասը, անճշտությունը և այլն: Սակայն դիտարկելով հարևան երկրների հաջող փորձը՝ միանշանակ հարկ է նշել, որ ՀՀ-ում նույնպես հնարավոր է ներդնել համապարփակ ապահովագրություն գյուղացիների պաշտպանության ու ռիսկերի զգալի համար:

## **SPECIFIC AGRICULTURAL RISKS IN ARMENIA. INSURANCE, AS A RISK MITIGATION MECHANISM**

**LEVON KOCHARYAN**

*Armenian State University of Economics,  
PhD Student of the Chair of Banking and Insurance,  
Yerevan, Republic of Armenia*

Agriculture is one of the most important spheres of Armenian economy. The GDP of Armenia in 2018 was AMD 6,002,747,800,000, out of which AMD 926,360,500,000, or the 15.4% of the GDP is from agricultural activities. This sphere is the most vulnerable and fragile, also the most affected by force major. Almost from all points of view, including the food security, labor, sociological, customer, etc, agriculture surely is the most important line of Armenian economical and sociological life. Hence, necessity emerges to take care of stable development and keep it safe from different hazards. Almost every year the agriculture of the Republic of Armenia is being affected by different natural catastrophes, such as hail, frost, drought, different types of illnesses and infections, also fires, which have significantly increased during the past few years. This article discovers the specific risks in agriculture of Armenia, finds mitigation mechanisms and discusses the possibility of insurance to control the risks.

**Key words:** *Insurance, agriculture, risks, crop, catastrophes, hail, drought, frost.*

## **ХАРАКТЕРНЫЕ ДЛЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫЕ РИСКИ: СТРАХОВАНИЕ КАК МЕХАНИЗМ СНИЖЕНИЯ ЭТИХ РИСКОВ**

**ЛЕВОН КОЧАРЯН**

*аспирант кафедры банковского дела и страхования,  
Армянского государственного экономического университета,  
г.Ереван, Республика Армения*

Сельское хозяйство является одной из важнейших сфер экономики Армении. ВВП Армении в 2018 году составил 6 002 747 800,00 драмов, из коих 926 360 500 000 драмов или 15,4% ВВП приходится на сельскохозяйственную деятельность. Эта сфера является наиболее уязвимой и хрупкой, сильно подверженной влиянию форс-мажорных ситуаций. Уязвима почти со всех точек зрения, включая продовольственную безопасность, занятость, социальный и потребительский аспекты и т. д. Сельское хозяйство можно назвать самой важной сферой для Армении. Следовательно, возникает необходимость заботиться о его стабильном развитии и защите от различных рисков. Почти каждый год сельское хозяйство Республики Армения подвергается воздействию различных природных катастроф, таких как град, заморозки, засуха, различные виды болезней и инфекций, а за последние годы увеличились также случаи пожаров. В данной статье попробуем раскрыть характерные для Армении сельскохозяйственные риски, представить применяемые в международной практике механизмы их сдерживания, а также обсудить возможности страхования выявленных рисков.

**Ключевые слова:** *страхование, сельское хозяйство, риски, урожай, катастрофы, град, засуха, заморозки.*